«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկա՝ Տեխնոլոգիա

Հեղինակ՝ Նազիկ Գասպարյան

Մարզ՝ Արագածոտն

Ուսումնական հաստատությունը՝ Երնջատափի Ե. Չարենցի անվան միջն.դպրոց

Բովանդակություն

Ներածություն …….…3
1.Ուսուցչի դերը հասարակության մեջ,դրա կարևորությունը և խնդիրները…….....…5
2.Դպրոցը, արժեքները և կրթության հենք…….....…9
3.Արժեհամակարգի ձևավորումը……...…11
4.Սովորողի արժեհամակարգի ձևավորումը <<տեխնոլոգիա>> ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում…….....14
5.Եզրակացություն……..…16
6.Գրականության ցանկ…….....18

Ներածություն

Կրթությունը ամենահզոր զենքն է,որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար:

Նելսոն Մանդելա

Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման,ինչպես նաև մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը:Կրթությունը կարևորվում է որպես պետական ռազմավարական հիմնախնդիրների՝ազգային անվտանգության,կայուն տնտեսական զարգացման,աղքատության հաղթահարման,ժողովրդավարական հասարակության զարգացման,խելամիտ տնտեսության կայացման,լուծման առանցքային գործոններից մեկը:

Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք,ուր հաստատուն են էթիկական նորմեր,ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել:Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել:Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝նա պետք է զգա և՛ ցավ,և՛ ուրախություն,ունենա թե դժվարություններ,թե հաղթանակներ:Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք:Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները,այլ ոչ թե թելադրված,անգիր արած,բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները:Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ,որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար,կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը:

Շարունակական կրթության գաղափարով պայմանավորված՝ այսօր մանկավարժության ուսումնասիրության առարկան կրթությունն է: Մարդը զարգանում և փոփոխվում է ողջ կյանքի ընթացքում, այսինքն նա շարունակական մանկավարժական օգնության կարիք է զգում ողջ կյանքի ընթացքում: Մանկավարժությունը և՛ տեսական, և՛ գործնական գիտություն է: Մանկավարժությունը չի առաջարկում դեղատոմսեր, միանշանակ պատասխաններ: Սակայն առաջարկում է դրույթներ և ստեղծագործական որոնողական աշխատանքի սխեմաներ, որոնք թույլ են տալիս իրականացնել երեխայի դաստիարակությունը, ձևավորելով նրա անձնային որակները: Մանկավարժությունը գիտություն է և արվեստի, գիտելիքի, վարպետության, մարդկանց ճանաչելու ձգտման և կարողության սինթեզ: Կարելի է սահմանել նաև այսպես. մանկավարժությունը գիտություն է, որը հետազոտում է կրթության, դաստիարակության և զարգացման օրինաչափությունները:

Գլուխ 1

Ուսուցչի դերը հասարակության մեջ,դրա կարևորությունը և խնդիրները

Ուսուցչի դերը բազմազան է: Մեզանում ուսուցիչը սովորաբար ընկալվում է որպես սովորեցնող՝ ակադեմիական գիտելիքը մեխանիկորեն փոխանցող անձ: Հաճախ նույնիսկ կիրառվում է ոչ թե ուսուցիչ, այլ՝ դասատու բառը. այսինքն՝ուսուցիչը ընկալվում է նույնիսկ ոչ թե որպես սովորեցնող, տեսական և գործնական հմտություններ փոխանցող, այլ ընդամենը դաս տվող, վարժեցնող անձ (հատկանշական է, որ նախկինում տարածված էր վարժապետ եզրույթը, որն այժմ կիրառվում է ծաղրանքի համատեքստում):

Ըստ էության, տեղի է ունեցել ուսուցչի դերի աղավաղում ծնողների, աշակերտների և լայն հասարակության ընկալումներում: Մինչդեռ ուսուցչի դերն ավելի բազմազան ու բազմաբովանդակ է, քան պարզապես դաս տվողի, ինչ-որ բան սովորեցնողի դերը:

Եթե դիտարկենք ուսուցչի կամ ընդհանրապես դպրոցի դերը երեխայի կրթության իրավունքի իրացման հարցում, ապա թերևս որպես առաջին և ամենակարևոր դերերից մեկը կառանձնացնեի ուսուցչի կամ դպրոցի դերը՝ որպես սոցիալական հավասարակշռողի կամ հավասարակշռությունը պահպանողի:

Գաղտնիք չէ, որ Հայաստանի տարածքային անհամաչափ սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքում հասարակությունը ևս, իր սոցիալական բաղադրիչով, բազմաշերտ է: Միևնույն դպրոցում կամ դասարանում սովորում են տարբեր սոցիալական-տնտեսական կարգավիճակ ունեցող ընտանիքների կամ տարբեր կենսապայմաններում ապրող երեխաներ:

Հետազոտությունները վկայում են, որ ավելի լավ կրթություն ստացած ծնողների երեխաները առավել մեծ հավանականություն ունեն հաջողության հասնելու կրթության ասպարեզում, քան, օրինակ, այն երեխաները, որոնց ծնողները չունեն բարձրագույն կրթություն:

Տվյալ դեպքում, դպրոցը և ուսուցիչը պարտավոր են լրացնել ընտանիքի կամ ծնողների կրթվածության մակարդակի բացը՝ հավասարակշռելով և հնարավորություն տալով երեխային լիարժեք իրացնել կրթության իրավունքը: Ուսուցիչը կարող է մեղմել նաև ընտանիքներում առկա անբարենպաստ հոգեբանական մթնոլորտի ազդեցությունը՝ օգնելով երեխային լիարժեք ներառվել թե՛ դասապրոցեսում, թե՛ հանրային կյանքում:

Պետության քաղաքականության մշակման տեսանկյունից սա շատ կարևոր է. այն պետությունները, որոնք ունեն սոցիալական արդարության տեսլական, հստակ քայլեր են ձեռնարկում կրթության մեջ յուրանքանչյուր երեխայի կարիքների վերհանման և որակյալ

հանրակրթությունը հատկապես խոցելի ընտանիքների երեխաների համար առավելագույնս մատչելի ու հասանելի դարձնելու համար:

Գլուխ 1.1

Երեխայի խնամողին փոխարինողի դերը

Հաճախ դասապրոցեսում ուսուցիչը բախվում է բուն ակադեմիական կրթության հետ չառնչվող երևույթների, ինչպիսիք են, օրինակ, սովորողների միջանձնային կոնֆլիկտները, առանձին երեխաների՝ տվյալ պահի հուզմունքը կամ տարբեր պատճառներով պայմանավորված բարդ հոգեվիճակը, տրամադրության անկումը և այլն:
Այստեղ արդեն կարևորվում է ուսուցչի՝ ոչ այնքան կրթողի, որքան աջակցողի ու խնամողի դերը: Ուստի կարևոր է, որ ուսուցիչն ունենա անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ այդ դերը ստանձնելու և իրավիճակն արդյունավետ հասցեագրելու համար:Հաճախ ուսուցիչը երեխայի համար դառնում է հեղինակություն և շատ դեպքերում ավելի բարձր հեղինակություն, քան հենց երեխայի ծնողները: Շատ կարևոր է, թե ինչ աշխարհայացքի, ինչ արժեհամակարգի, ինչ ռեսուրսների կրող է ուսուցիչը և այդ ռեսուրսը երեխաներին փոխանցելու ինչպիսի հմտություններ ունի:
Շատ կարևոր է, որ ուսուցիչն ընդհանրապես զերծ լինի որևէ տեսակի կարծրատիպերից: Եթե ուսուցիչը, օրինակ, ունի կանխակալ վերաբերմունք որոշակի խմբի երեխաների նկատմամբ, ապա արդյունավետ ուսուցում, բնականաբար, չի ստացվի: Ունենք հետազոտություններ, որոնք վկայում են ուսուցիչների շրջանում գենդերային կարծրատիպերի առկայության մասին: Արդյունքում կրթության իրավունքի հավասար իրացման հնարավորությունների տեսակետից խոցելի են դառնում աղջիկները:
Օրինակ, ուսուցիչը մտնում է դասասենյակ՝ ի սկզբանե համարելով, որ կան ինչ-որ դերեր կամ մասնագիտություններ, որոնք բնորոշ են միայն աղջկան կամ միայն տղային, կամ, որ միայն տղան կարող է ունենալ մեծ ընկերական շրջապատ, պաշտոն զբաղեցնել կամ որոշակի ոլորտում կարիերա անել, իսկ աղջիկը՝ ոչ: Լինելով նման գենդերային կարծրատիպերի կրողը և այդ կարծրատիպերով դասարան մտնելով՝ ուսուցիչն արդեն իսկ վտանգում է հավասարության և խտրականությունից զերծ սկզբունքի հիման վրա դասավանդումը:Եթե աղջնակը պատրիարխալ(հայրիշխանություն) ընտանիքից է, որում դաստիարակվել է որպես ապագա հնազանդ

հարս, և ուսուցիչն էլ է նման աշխարհայացքի կրողը, ապա այդ երեխան, ըստ էության, այլևս հնարավորություն չունի ճեղքելու այդ փակ շղթան և փոխելու իր ապագան:

Կարծրատիպերը կարող են լինել ոչ միայն գենդերային, այլև կրոնական, ռասայական, սոցիալական և այլն: Նույն կերպ, եթե ուսուցիչը դասասենյակ է մտնում ի սկզբանե կանխակալ վերաբերմունքով, օրինակ, ընտանեկան բռնության մեջ ապրող կամ հարբեցող ծնող ունեցող երեխաների նկատմամբ, ապա տվյալ խմբի երեխաներրը մարգինալացվում են դասասենյակում, և վտանգվում է նրանց կրթության իրավունքը:
Ցավոք,ոչ միշտ են ուսուցիչների կողմից լիարժեքորեն ընկալվում իրենց՝ ռեսուրս կրողի և հավասարակշռողի դերը:

Գլուխ 1.2
Ուսուցչի՝ մոտիվացնող և քաջալրող դերը

Ուսուցչի՝ մոտիվացնող և քաջալերող դերը պակաս կարևոր չէ սովորողների հաջողության գործում: Մենք բոլորս էլ դպրոցում սովորելու տարիներին ունեցել ենք գոնե մեկ ուսուցիչ, որը մշտապես օգնել ու քաջալերել է մեզ՝ ավելի մեծ ձեռքբերումների և բարձունքների հասնելու համար: Նույնիսկ եթե առաջին հայացքից երեխան չի ցուցաբերում մեծ հետաքրքրվածություն կամ ակնհայտ ունակություններ այս կամ այն առարկայի նկատմամբ, դեռ չի նշանակում, որ նա ընդունակ չէ սովորելու կամ կրթվելու:
Ուշադիր և քաջալերող դերը ստանձնած ուսուցիչը չի հանձնվի, այլ կշարունակի փնտրել հնարավորություններ՝ երեխային մոտիվացնելու և քաջալերելու սովորել, բացահայտել նոր աշխարհ: Դժվարությամբ սովորող, առարկայի ու ուսուցման նկատմամբ ակնհայտորեն ուշադրություն և հետաքրքրվածություն չցուցաբերող երեխաների առկայության պարագայում կարևոր է, որ ուսուցիչը անտարբեր չլինի և ժամանակին նկատի ու սահմանի խնդիրը, ծնողի և սովորողի հետ միասին նշագծի հաջողության հասնելու ուղին և հաստատակամորեն առաջնորդի սովորողին:

Գլուխ 2

Դպրոցը, արժեքները և կրթության հենք

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարեւորում ենք արժեքների ձեւավորումը գալիք սերնդի մոտ եւ միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձեւակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը:

Արժեքը երեւույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների,

հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք եւ այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների եւ հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձեւավորման:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձեւավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլեւ անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում: Նորմերը տարբեր են քաղաքում եւ գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, եւ որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձեւավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի: Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում:

Հիմա անդրադառնանք բարոյականությանը: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը եւ չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին եւ բերում է դրանց քայքայման: Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը: Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը: Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը եւ տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձեւավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ եւ այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա ե՛ւ ցավ, ե՛ւ ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում

աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը եւ ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձեւավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը:

Գլուխ 3

Արժեհամակարգի ձևավորումը

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը,որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Գլուխ 4

Սովորողի արժեհամակարգի ձևավորումը <<տեխնոլոգիա>> ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում

Տեխնոլոգիան գիտելիքների, հմտությունների, արժեքների և վերաբերմունքի նպատակային կիրառումն է մարդկային կարիքներն ու ցանկությունները բավարարող ապրանքներ կամ համակարգեր ստեղծելու համար:

«Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի նպատակը ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, ով արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն

տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր: Այն տեխնոլոգիական միջավայրի և արտադրական գործընթացների նկարագրությանը, գաղափարները գործողության վերածելու հմտությունների ձևավորմանը միտված շարունակական գործընթաց է, որի նպատակը մարդու բարեկեցությունն է:

Տեխնոլոգիա առարկան նպաստում է շուկայական տնտեսության պայմաններում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորում է բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անձ, նախապատրաստում է նրան ինքնուրույն կյանքին:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը դպրոցում ենթադրում է սովորողների ընդհանուր տեխնոլոգիական իրազեկվածություն՝ տեխնոլոգիական մտածողության ձևավորման նպատակով, կիրառական տեխնոլոգիական գիտելիքների և կենցաղային հմտությունների ձևավորում: Այն նպատակաուղղված է ընդլայնելու աշակերտների գիտելիքները գիտության նվաճումների, բնության, մարդու և հասարակության վրա տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցության մասին, ձևավորելու ձեռնարկատիրական նախնական գիտելիքներ, իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ:Այն նաև նպաստում է սովորողների արժեհամակարգի ձևավորմանը:

«Տեխնոլոգիայի» ուսուցման գործընթացում հաշվի են առնվում յուրաքանչյուր սովորողին, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ երեխաներին ներկայացվող պահանջները՝ անհատական մոտեցում ցուցաբերելով նրանց առանձնահատկություններին, կարողություններին, հմտություններին և կարիքներին՝ ստեղծելով համապատասխան պայմաններ:<<Տեխնոլոգիա>> ուսումնական առարկայի նպատակն է ձևավորել հետաքրքրություն մեր շրջապատի նյութը ճանաչելու,ուսումնասիրելու,դասակարգելու,դրանք սեփական կարիքների համար օգտագործելու նպատակով:

Նյութերի ուսումնասիրության և մշակման արդյունքում սովորողները գաղափարների,եզրահանգումների միջոցով կարողանում են ստեղծել մոդելներ,կենցաղային իրեր,սարքեր,խաղեր,հասկանում են դրանց գեղագիտական և բարոյական արժեքը,դրանցով զարդարում,գեղեցկացում ու հարստացնում են շրջապատը,իրենց կյանքը:

Եզրակացություն

**Արևի տակ չկա ավելի վեհ ու բարձր մասնագիտութ-
յուն,քան ուսուցչի
մասնագիտութ-
յունն է:
Յ.Ա.Կոմենսկի**

Ո՞վ է ուսուցիչը: Մեկը, որ սովորեցնում է սեփական օրինակով՝ տալով ոչ միայն հանրագիտարանային ճշմարտություններ, այլև սովորեցնելով ճանաչել չարն ու բարին, ազնիվն ու գեղեցիկը, ճիշտն ու սխալը: Ուսուցիչը կրթում է երեխայի միտքն ու սիրտը, նպաստում նրա աշխարհայացքի ձևավորմանը, նրա առջև բացում գիտության ու գրականության խորհրդավոր դռները, աշակերտին սովորեցնում զարմանալ՝ միևնույն ժամանակ նույնը սովորելով նաև նրանից:
Ու,թերևս,ամենակարևորն ու անգնահատելին այն է,որ ուսուցիչը ձևավորում է երեխայի արժեհամակարգը,<<մարդ>> տեսակը հասարակության մեջ:
-Լավ ուսուցիչը նա չէ, ով ունի մասնագիտական կայուն գիտելիքներ: Լավ ուսուցիչը նախ և առաջ պետք է ապրի աշակերտի հոգսերով, աշակերտի ձեռքբերումները համարի նաև իրենը: Նա է, ով իր առջև նստած աշակերտի մեջ տեսնում է երկրի ապագան կերտող քաղաքացուն և դաստիարակում է կրթված, հայրենասեր ու հայեցի սերունդ: Իհարկե, ցանկացած մարդ լավ է զգում, երբ իր աշխատանքը գնահատվում է նաև պետության կողմից: Բայց ուսուցչի համար ամենամեծ գնահատանքը ազգի ու հայրենիքի համար դաստիարակած ու աճեցրած կիրթ և

խելացի, աշխատասեր ու բանիմաց, անձնվեր ու հայրենասեր սերունդների երախտագիտությունն է:

Կրթությունը հաջողության բանալին է, կամ գոնե ուզում ենք հավատալ դրան, իսկ գաղտնիք չէ, որ փոքրիկ բանալին կարող է բացել հսկայական դռներ: Քանի՛ ուսուցիչ է մեր առջև այդպիսի դռներ բացել: Այն նաև զենք է, զենք աշխարհը փոխելու, այն ապրելու ու արարելու համար ավելի լավ վայր դարձնելու համար:

Ի հավելումն այս հետազոտական աշխատանքի ցանկանում եմ խոսքս ավարտել Նելսոն Մանդելայի հետևյալ խոսքով. **«Կրթությունն ամենահզոր զենքն է, որ դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար»,**իսկ այդ ամենահզոր զենքը գտնվում է ուսուցչի ձեռքում**:**

Գրականության ցանկ

1.Յ.Ա.Բաբանսկի <<Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում>>

2.Ա.Վ.Մուդրիկ <<Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում>>

3.Վ.Ա.Սուխոմլինսկի <<Սիրտս նվիրում եմ երեխաներին>>

4. https://www.infocom.am/hy/article/4051

5. https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf

6. Ա.Ե.Օլշաննիկովա <<Հույզեր և դաստիարակություն>>

7.Я.Корчак,Избранные педагогические произведения.